ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. /374010/ 287401, 2 25 22**

<<_____>> _____2020թ. N ---------- **Ֆաքս/374010/ 28 18 32**

ՀՀ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍԱՆՈՂՈՒՀԻ
ԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Ավետիսյան

Ի պատասխան ՀՀ Վայոց ձորի մարզպետին 2020 թվականի հունվարի 9-ին հասցեագրված (մտից փաստաթուղթ թիվ 0053) Ձեր հարցման՝ հայտնում ենք, որ մարզպետարանի աշխատակիցների 2019 թվականի տարեվերջյան պարգևատրման գումարի չափի մասին տեղեկատվություն չենք կարող տրամադրել, քանի որ մարզպետարանում կատարել ենք հարցում, սակայն չենք ստացել աշխատակիցների համաձայնությունը՝ իրենց տվյալները փոխանցելու համար: <<Անձնական տվյալների պաշտպանության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով և առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով: Ինչպես նաև <<Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անձնական տվյալները (վարձատրության մասին տեղեկատվությունը), առանց տվյալների սուբյեկտի համաձայնության չեն կարող տրամադրվել:

Недействительная подпись

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ Իրավաբանական բաժին
Ս.Մխիթարյան, Հեռ. (0281) 2 55 95